«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Գոյականական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը: Դրանց արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Ուսուցիչ՝ Միրզաջանյան Լիլիթ

Դպրոց՝ Երեւանի հ. 16 ավագ դպրոցի

Ղեկավար՝ Թամարա Թովմասյան

ԵՐԵՎԱՆ – 2023

Բովանդակություն

Ներածություն---------- 2

Գոյականական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը----------4

Նախադաս եւ հետադաս որոշիչի արտահայտությունը և կետադրությունը---------

Տրոհվող հատկացուցչի արտահայտությունը և կետադրությունը----------

Բացահայտիչ----------

Բուն բացահայտչի արտահայտությունը եւ կետադրությունը ----------

Մասնական բացահայտչի արտահայտությունը և կետադրությունը ----------

Մասնավորող պարագայական բացահայտչի արտահայտությունը և կետադրությունը

Եզրակացություն---------- 14

Օգտագործված գրականության ցանկ----------15

Ներածություն

Ժամանակակից կրթական համակարգում անհրաժեշտություն է առաջանում նորովի մոտեցում հանդես բերել լեզվի ուսուցման մեթոդաբանության նկատմամբ։

Ներկայումս ուսուցչին վերապահվող կարևորագույն խնդիրներից մեկը կրթության բովանդակության արդյունավետ եւ նպատակային կազմակերպումն է։ Այս գործընթացում ուսուցիչը մի շարք այլ գործոնների հետ պետք է հաշվի առնի նյութի համակողմանի եւ ամբողջական մատուցումը։ Մատուցման նպատակադրումը պետք է լինի աշակերտակենտրոն, այսինքն՝ նպատակը պետք է լինի գիտելիքների, հմտությունների, վերլուծական մտածողության և այլ որակների զարգացումը, ոչ թե սոսկ տեղեկատվություն հաղորդելը։ Ուսուցումը պետք է հնարավորինս այնպես կազմակերպվի, որ սովորողի մեջ չմնան տարակուսելի եւ շփոթեցնող մոտեցումներ, իսկ կետադրության պարագայում որոշ դեպքերում, ցավոք սրտի, դրանից խույս տալ սովորաբար չի լինում:

Սույն հետազոտական աշխատանքի թեման է՝ « Գոյականական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը: Դրանց արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ»: Թեման արդիական է այն առումով, որ հարցի քննությունը գործնական կարևոր նշանակություն ունի գրական լեզվի մշակման ու կանոնարկման տեսանկյունից հատկապես այն պատճառով, որ հաճախ խզում է առաջանում սահմանված կետադրական կանոնների (կետադրության տեսության) և դրանց գործնական կիրառության միջև: Հայերենի կետադրության կանոնները մշակելիս հաճախ լեզվաբանները փորձում են ելակետ ունենալ գեղարվեստական գրականության լեզուն, երբեմն ոմանք նույնիսկ իբրև վկայություն են բերում միայն հայ դասական գեղարվեստական գրականության կետադրական փաստերը, կամ համոզչականության հիմնական գրավական են համարում հղումը գեղարվեստական գականության փաստերին: Հայտնի է, սակայն, որ գեղարվեստական լեզուն խստորեն նորմավորված լեզու չէ և չի էլ կարող այդպիսին լինել. կետադրությունը գրողի համար նախ և առաջ բովանդակային-արտահայտչական միջոց է գեղարվեստական կատարելության հասնելու ճանապարհին:

Իմ նպատակն է՝ այս աշխատանքով ներկայացնել գոյականական անդամների տրոհվող լրացումների օրինաչափությունները՝ ինչպես սահմանված կետադրական կանոնների (կետադրության տեսության) համաձայն, այնպես էլ գործնական կիրառության միջև եղած հակասությունների ներկայացմամբ:

Հետազոտական խնդիրներն են՝

Ներկայացնել գոյական անդամի լրացումները՝ որոշիչ, հատկացուցիչ, բացահայտիչ

Ներկայացնել նախադաս բազմակի որոշչի արտահայտության առանձնահատկությունները գեղարվեստական գրականության մեջ

Բացատրել հետադաս որոշչի կետադրության օրինաչափությունները

Պարզաբանել հետադաս որոշչի տրոհման օրինաչափությունները գեղարվեստական գրականության մեջ

Ներկայացնել հատկացուցչի, բացահայտչի կիրառությունը գեղարվեստական գրականության մեջ

Բացատրել հատկացուցչի, բացահայտչի կետադրության առանձնահատկությունները

Գոյականական անդամի տրոհվող լրացումների կետադրությունը: Դրանց արտահայտությունը գեղարվեստական գրականության մեջ

Բացի ենթակայից և ստորոգյալից, նախադասության մյուս անդամները լրացումներ են կամ երկրորդական անդամներ։ Երկրորդական անդամները իրենց հերթին ունեն լրացումներ, դրանք արդեն լրացման լրացումներ են։Նախադասության մեջ գոյականական անդամը ունենում է այնպիսի լրացումներ, որոնք ցույց են տալիս գոյականով արտահայտված անդամի որևէ հատկանիշ, նրա պատկանելությունը և ով, ինչ լինելը։ Այդ լրացումներն են ՝ որոշիչը, հատկացուցիչը, բացահայտիչը։

Որոշիչ: Որոշչի կետադրությունը

Որոշիչը գոյականական անդամի այն լրացումն է, որը ցույց է տալիս առարկայի որակական և քանակական հատկանիշ։ Օրինակ՝ Լուսավոր երազների գրկում ճախրում էին սիրահարված պատանու հոգու թևերը։ Որոշիչը պատասխանում է ինչպիսի՞, ո՞ր, որքա՞ն հարցերին։ Որոշիչ ունեցող գոյականները կոչվում են որոշյալ (որոշվող):

Որոշիչները սովորաբար գործածվում են որոշյալներից առաջ,այսինքն՝ որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս: Օրինակ՝ Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում... Նախադաս դիրքում որոշիչը չի տրոհվում:

Բազմակի որոշիչների տրոհության հարցը միշտ էլ քննարկությունների առարկա է եղել: Հանգամանորեն ներկայացվել են հնարավոր լուծումներն ու զուգաձևությունները: Կանոնական է նշանակությամբ համասեռ, սակայն իմաստով տարասեռ որոշիչները ստորակետով թե՛ տրոհելը, թե՛ չտրոհելը. «ծաղկազարդ(,) անուշաբույր այգեստաններ», «հոգսաշատ(,) անհանգիստ օրեր», «ազդեցիկ(,) իրական պատկերներ», «լուսավոր(,) զարդարուն դահլիճներ»:

Կետադրական զուգահեռ ձևեր ունեն ածական + դերբայ որոշչային կապակցությունները. եթե դրանք չեն լրացնում որոշյալին առանձնաբար կամ նույն կամ մոտ հատկանիշներով չեն բնութագրում առարկան և կամ կարող են ընկալվել լրացում-լրացյալ հարաբերությամբ, ապա կարող են նաև չտրոհվել ստորակետով, ինչպես՝ «Լսվեց դասական(,) առինքնող երաժշտություն», «Փողոցում հայտնվեցին ուրախ(,) աղմկող երեխաներ»: Եթե առարկան բնութագրում են առանձին-առանձին

և կամ նույն կամ մոտ հատկանիշներով, ապա տրոհվում են, ինչպես՝ «Տխուր, մտահոգված տեսք ուներ»:

Գեղարվեստական խոսքում, սակայն, հատկապես բանաստեղծությունների մեջ որոշիչը դրվում է որոշյալից հետո: Եթե որոշիչը դրվում է որոշյալից հետո, կոչվում է հետադաս որոշիչ:

Օրինակ՝ 1) Դաշտում մեզ էին ժպտում ծաղիկները՝ կարմիր, սպիտակ, կապույտ ու դեղին: 2) Տուն մտավ այս տղան՝ սև ու խոշոր աչքերով: Հետադաս որոշիչը չի տրոհվում, եթե արտահայտված է մեկ բառով: Օրինակ՝ Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսե: Եթե հետադաս որոշիչը ծավալուն է, ապա որոշյալից անջատվում է բութով, իսկ նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով:

Հետադաս որոշիչը տրոհվում է բութով, եթե արտահայտված է՝

1. Բազմակի որոշիչներով, ինչպես ՝ Դա մի փոքրամարմին կին էր՝ տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և շատախոս: Մերթընդմերթ նավթահանքերից լսվում էին ինչ-որ խշշյուններ. դա դեպի ամբարները հոսող նավթի ձայնն էր՝ միօրինակ ու տաղտկալի:

2. Բառակապակցությամբ, ինչպես՝ Օր՝ Ծառերը՝(որոշյալ) ճերմակ(որոշիչ) ծաղիկներով(որոշիչ), կարծես նորահարս լինեն: Քիչ հետո երևաց Ավագ կամ, ինչպես կոչում էին, Վաղարշապատի դուռը՝ զույգ աշտարակներով և բարձր բուրգերով, որոնց վրա ծածանվում էին պարսից դրոշներ բազմաթև արծվի զինանշանով: Բեկին մոտեցավ մելիք Թուրինջը՝ գեղջկական հագուստով գրխաբաց ու շփոթված:

3. Դերբայական դարձվածով, ինչպես՝ Հեռվում երևում էր Մասիսը՝ կապույտ շղարշ հագած: Երիտասարդն իր առջև տեսավ ծանոթ միջնաբերդը՝ վերևից վար ծառաստանով շրջապատված և կանաչների մեջ կորած այգին ատամնավոր պարսպով և բուրգերով զոտևորված:

Հատկացուցիչ

Գոյականական անդամի այն լրացումը, որը ցույց է տալիս պատկանելություն, սերում, ծագում, վերաբերություն, կոչվում է հատկացուցիչ: Հատկացուցիչը դրվում է սեռական հոլովով և պատասխանում է ո՞ւմ, ինչի՞, ինչերի՞ հարցերին: Հատկացուցիչ ունեցող անդամը կոչվում է հատկացյալ:

Հատկացուցչի կետադրությունը

Հատկացուցիչը որևէ հատուկ կետադրություն չունի։ Շարադասությամբ հատկացուցիչը նախորդում է հատկացյալին։ Շարադասությունը՝ ուղիղ և շրջուն։ Ուղիղ շարադասության դեպքում հատկացուցիչը միշտ դրվում է նախադաս։ Օրինակ՝ Ու բոլորի դեմքի վրա վա՜խ, սպասում։(ՊՍ) Գեղարվեստական խոսքում երբեմն հատկացուցիչը կիրառվում է հետադաս՝ շրջուն շարադասությամբ, ինչպես՝ քու՛յր իմ, ամոքի՛ր վշտերս թաքուն... Հատկացուցիչը միշտ դրվում է սեռական հոլովով, հատկացյալի հետ չի համաձայնում, կապվում է խնդրառությամբ:

Հատկացուցչի վրա դրվում է բութ, եթե հեռացած է հատկացյալից՝ իմաստային շփոթը կանխելու համար:

Եթե հատկացուցչի և հատկացյալի միջև առկա է նախադասության այլ անդամ՝ գոյական կամ դերանուն պարունակող որոշիչ բառակապակցություն կամ դերբայական դարձված, ապա հատկացուցիչն այդ անդամից տրոհվում է բութով, հատկացուցիչը նրան չվերագրելու համար: Աղջկա՝ աստղերով հիացող հայացքը լի էր սպասման հույսով: Սովորողի՝ Փարիզում արված լուսանկարները տեղադրված էին բլոգում: Դերանվանական բառակապակցության դեպքում հատկացուցիչը կարող է երբեմն չտրոհվել, օրինակ՝ Իմ նրան ուղղված խոսքը հուզեց բոլորին:

Օր.՝ ՀՀ նախագահի՝ վերջերս ԱՄՆ կատարած այցելությունը մեծ արձագանք է ստացել ամբողջ Սփյուռքում: Զանգվի ափին խաչաձև նստել էր Երևանի՝ շատերի համար գերեզման դարձած մռայլ և տխրադեմ բանտը, որի մութ միջանցքներում անընդհատ լսելի էր բանտապահների կոպիտ կոշիկների՝ գետինը դոփող ձայնը: Հետազոտվող հեղուկը զբաղեցնում է գնդաձև ծավալի՝ M և N գծիկներով անջատված հատվածը: Գազաչափից հոսելիս ջրի՝ օդով զբաղեցված ծավալում առաջանում է օդի

նոսրացում: Դատարանի՝ սնանկության գործն ըստ էության լուծող դատական ակտերը կարող են բողոքարկվել վերաքննության կարգով:

Ծանոթություն 1:

Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի վրա բութ դնել՝ իբրև զուգաձևություն: Օր.՝ Տնօրենության(՝) մեզ ուղարկած նամակի պատասխանը պատրաստ է: Նկարիչը մեծագույն հափշտակությամբ սկսել էր կարգի բերել Արարատյան դաշտի(՝) իր բնանկարները:

Ծանոթություն 2:

Հեռացած հատկացուցիչը չի տրոհվում, եթե նրա և հատկացյալի միջև չի լինում գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված անդամ. Երբ F ուժը ազդում է ձողի միջնակետում, ապա ձողի սեփական կշռով պայմանավորված ճկմանը կավելանա F ուժով պայմանավորված ճկում: Ընկերների նեղ և բարյացակամ շրջանակն այն ամենահիանալի նվերն է, որ մենք կարող ենք պարգևել մեր երեխային: Խաղի ընթացքում մեծերի համարժեք ու խելամիտ վարքը երեխաներին օգնում է յուրացնելու մարդկային փոխհարաբերությունների հանրաճանաչ կանոնները:

Ծանոթություն 3:

Եթե հատկացուցիչը և հատկացյալը ընդմիջվում են առարկայանիշ դերանունով, ապա հատկացուցչի վրա բութը կարող է դրվել կամ չդրվել, ինչպես՝

Վահանի(՝) նրան ուղարկած ծաղիկները զգլխիչ բուրմունք ունեին:

Կա կարծիք, որ նախընտրելին բութ չդնելն է, քանի որ «հատկացուցիչներն այդ դերանուններին չեն վերագրվում, և իմաստային շփոթ չի առաջանում»:

Կարծում եմ, նախընտրելի է բութով տարբերակը, քանի որ բանավոր խոսքում առաջանում է որոշակի դադար, որը, ենթադրվում է, իր կետադրական արտահայտությունը պիտի ունենա գրավոր խոսքում: Այսինքն՝ ելակետ պիտի

ունենալ ոչ թե իմաստային-տրամաբանական հիմունքը, որը այստեղ ըստ էության չունի դերակատարություն, այլ հնչերանգայինը:

Բացահայտիչ

Բացահայտիչը նախադասության երկրորդական անդամ կամ գոյականական անդամի լրացում է, որ ցույց է տալիս լրացյալի ով կամ ինչ լինելը: Բացահայտիչ ունեցող գերադաս անդամը կոչվում է բացահայտյալ: Բացահայտյալի ու բացահայտչի միջև եղած արտասանական դադարը բավականին ակնհայտ է և գրավոր խոսքում արտահայտվում է կետադրական նշանով (սովորաբար՝ բութով): Բացահայտիչը լինում է երեք տեսակ՝ բուն բացահայտիչ, մասնական բացահայտիչ և մասնավորող-պարագայական բացահայտիչ: Բացահայտիչը պատասխանում է այն հարցին, ինչ հարց, որ տրվում է բացահայտյալին՝ ո՞վ, ու՞մ, ու՞մով, ի՞նչը, ինչի՞ց, ինչո՞վ, որտե՞ղ, ե՞րբ և այլն

Բուն բացահայտիչ

Բուն բացահայտիչը առարկայի ով կամ ինչ լինելը բացահայտում է ամբողջությամբ և պահանջում է նույն հարցը: Աբու-Լալա Մահարին՝ հռչակավոր բանաստեղծը Բաղդադի, Տասնյակ տարիներ ապրեց խալիֆաների հոյակապ աշխարհում: (Ավ. Իսահակյան)

Բուն բացահայտիչը բացահայտյալի հետ համաձայնում է թվով, դեմքով, հոլովով: Այն բացահայտյալից տրոհվում է բութով, նախադասության մյուս անդամներից՝ ստորակետով (ստորակետ չի դրվում, երբ բացահայտիչը դրված է սեռական հոլովով, բացահայտչին անմիջապես հաջորդում է կապ, հանգույց, օժանդակ բայ կամ էլ հավելականը):

Բուն բացահայտիչն ունի կայուն շարադասություն. այն միշտ դրվում է բացահայտյալից հետո: Հայերենում սա միակ դեպքն է, երբ նախադասության անդամի շարադասությունը փոխելիս փոխվում է նաև նրա քերականական պաշտոնը: Օրինակ՝ Ամեն ինչ՝ երգ, հրթիռ, ատոմ ստեղծելու մասին գիտեմ, հող

ստեղծելու մասին՝ ոչ: Հայաստանի բոլոր քաղաքները՝ Վան, Կարին, Բագավան, Վաղարշապատ, Արտաշատ, բռնված էին պարսից զորքերով:

Բացահայտչից հետո չի դրվում ստորակետ հետևյալ դեպքերում՝

- Եթե բացահայտիչը դրված է սեռական հոլովով:
  Օրինակ՝ Տիգրան Մեծի՝ հայոց արքայի զորքը երկար տարիներ անպարտ էր:
- Եթե բացահայտչին հաջորդում է կապ՝ առաջ, համար, մասին, հետ,միջոցով և այլն: Ճամփորդի՝ ալեհեր կնոջ առաջ բացել էին տան դռները:
- Եթե բացահայտչից հետո դրվում է եմ, ես, է օժանդակ բայը կամ հանգույցը: Լուիզան՝ նրա աղջիկն էր ամեն ինչ կազմակերպում:
- Եթե բացահայտչից հետո ընկնում է էլ շաղկապը: Անին՝ դասընկերուհիս էլ որոշեց գալ մեզ հետ Արատես:
- Բացահայտիչները, իրենց հերթին, երբեմն կարող են ունենալ հետադաս որոշիչ լրացում: Դա հանգուցյալի երկրորդ որդին էր՝ Միքայելը՝ քսանութ տարեկան մի երիտասարդ՝ նուրբ կազմվածքով, ածխի պես սև մազերով, նորաձև ընչացքով:
- Չպետք է շփոթել բացահայտիչը բազմակի անդամների հետ, մանավանդ այն դեպքում, երբ բազմակի անդամները կրկնվում են նույն բառով՝ արտահայտելով ոճական սաստկացում: Եվ հանկարծ լսեց նա մի երգ, մի հիասչքանչ ու թախծոտ երգ (բազմակի անդամներ)

Մասնական բացահայտիչ

- Մասնական բացահայտիչը բացահայտյալին մասնակիորեն, միայն մի կողմը, մի հատկանիշը բացահայտող անդամն է: Ձևավորվում է որպես, իբրև կապերի միջոցով: Մասնական բացահայտիչը ունի ազատ շարադասություն և կարող է ընկնել բացահայտյալից առաջ և հետո: Օր.՝ Նրան բոլորն էին ճանաչում՝ որպես անվանի ճարտարագետի: Արիստոտելին՝ որպես իմ ուսուցչի, պարտական եմ նույնքան, ինչքան իմ հորը. հայրս ինձ կյանք է տվել, իսկ Արիստոտելը՝ այն, թե ինչպես կարելի է լավ ապրել: Իբրև նկարիչ՝ մեծ ճանաչում ուներ, իբրև քաղաքացի՝ բնավ:

- Մասնական բացահայտիչը հոլովով և թվով համաձայնում է բացահայտյալին։

  Օրինակ ՝ Որպես հայ զինվոր՝ Էդգար Վարդանյանը հանրաճանաչ է դարձել՝ հերոսության շնորհիվ:

- Մասնական բացահայտիչը որոշիչ հոդ չի ստանում։
- Ծանոթություն 1:

  Երբ մասնական բացահայտիչը նախադաս է, բութը դրվում է նրանից հետո, իսկ բացահայտյալից հետո ստորակետ չի պահանջվում: Օր.՝ Իբրև հին ծանոթներ՝ նրանք պետք է համերաշխության ձեռք մեկնեին միմյանց: Որպես հայոց դարավոր մշակույթի կենդանի վկաներ՝ խաչքարերը սփռված են Հայաստանի ամբողջ տարածքով:

- Ծանոթություն 2:

  Մասնական բացահայտիչի հետ չպետք է շփոթել որպես, իբրև կապերով ձևի պարագա բառակապակցությունները, որոնք սովորաբար հանդես են գալիս բայստորոգյալի կամ դերբայի կողքին՝ որպես նրա լրացում: Օր.՝ Դիվանագիտական գործակալը պարտավոր չէ ցուցմունքներ տալ որպես վկա: Որպես տեքստի դրսևորման անվանումներ գործածվող «բանավոր տեքստ» և «գրավոր տեքստ» արտահայտությունները չեն ընդգրկում տեքստի դրսևորման բոլոր կամ գոնե հիմնական ձևերը: Որպես ամփոփում ասենք, որ վիպակն ավարտվում է ողբով, քանի որ ծաղրածուն այդպես էլ չի կարողանում հանրությանը պարտադրել իր նկարագիրը: Պատասխան չուղարկելը վարչական դատարանը կարող է գնահատել որպես պատասխանողի կողմից հայցվորի վկայակոչած փաստերի ընդունում: Որպես անմիտ զրույց մեզ պատմել են մի օր / Նախնիների մասին մեր փառապանծ: Որպես, իբրև կապերով ձևի պարագա բառակապակցությունը սովորաբար հնարավոր է լինում փոխարինել պես կապով ձևի պարագա բառակապակցությամբ: Օր.՝ Այդ ամենը մեզ մատուցվում էր որպես անվերապահ ճշմարտություն: > Այդ ամենը մեզ մատուցվում էր անվերապահ ճշմարտության պես:

- Ծանոթություն 3:

  Բազմակի մասնական բացահայտիչներն ընկալվում են որպես բազմակի համազոր անդամներ և միմյանցից տրոհվում են ստորակետով: Օր.՝ Օրվա իշխողը խրոխտ քայլերով փորձում է հասնել այն բանին, որ իրեն՝ որպես Բորոդինոյի ճակատամարտում հաղթածի, որպես հեղափոխության հզոր առաջնորդի, որպես արևմտյան արժեհամակարգն ու մտածողությունը տարածողի և, վերջապես, որպես «նյու-նապոլեոնի», պետք է տան մեծ դափնիները: Իբրև հայտնի քանդակագործ, իբրև ակտիվ քաղաքացի՝ նա արժանի է բարձր պարգևների:
- Ծանոթություն 4. Վերնագրերում որպես մասնական բացա- 113 հայտիչ ընկալվող կառույցները սովորաբար չեն տրոհվում՝ կետադրական ավելորդ բեռից խուսափելու համար: Օր.՝ Ծաղրածուն որպես նախորդ մշակույթի պահապան Սահմանադրությունը որպես մեր կյանքի հիմնական օրենք Բայը որպես խոսքի մաս Վիմագրերը որպես Հայաստանի քաղաքական պատմության սկզբնաղբյուրներ (IX-XIV դդ.)

Մասնավորող պարագայական բացահայտիչ

- Մասնավորող պարագայական բացահայտիչ կոնկրետացնում է տեղ, ժամանակ ցույց տվող բացահայտյալին՝ պարագաներին: Տեղի՝ Ես քեզ կսպասեմ Երևանում, Լենինի անվան հրապարակում, յոթ աղբյուրի մոտ: Ժամանակի՝ Այս տարի, մայիսի մեկին, երեկոյան ժամը 9-ին, հրետանային համազարկերից ասես նորովի էր գեղեցկացել Երևանը:
- Մասնավորող բացահայտիչը բացահայտյալին երբեմն համաձայնում է, երբեմն՝ ոչ: Օրինակ՝ Երևանում՝ Աբովյան փողոցում, աշխատանքային եռուզեռ է:
- Մասնավորող պարագայական բացահայտիչը բացահայտյալից տրոհվում է բութով, իսկ նախադասության մնացած մասից՝ ստորակետով: Պարագայական բացահայտիչը ևս կարող է լինել բազմակի, կամ ինքը հաջորդ անդամի համար դառնում է բացահայտյալ
- Ծանոթություն: Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը, կարող են լինել կրկնակի, եռակի և այլն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ և տրոհվել բութով: Օր.՝ Լև Տոլստոյը թաղված է Յասնայա Պոլյանայում՝ անտառում՝ խոր ձորակի փեշին, ուր մի ժամանակ եղբայրների հետ փնտրում էր այն «կանաչ փայտիկը», որի վրա գրված էր, թե ինչպես կարելի է բարի ու երջանիկ դարձնել մարդկանց: Հերթական ժողովը կկայանա հաջորդ շաբաթ՝ հինգշաբթի օրը՝ աշխատանքից հետո՝ ժամը վեցին:
- Կան կապակցություններ, որոնք, ձևով նման լինելով բացահայտիչ-բացահայտյալին, չեն կետադրվում դրանց նմանողությամբ: Որպես այդպիսիք՝ ավանդաբար ընդունվել են դերանուն + դերանուն կապակցությունները՝ ես ինքս, դու ինքդ, մենք ինքներս, մենք բոլորս, դուք ամենքդ. դրանք ձևավորված են ոճական ավելադրությամբ և ունեն խստացնող նշանակություն: Գրվում են առանց կետադրության:
- Կարծում ենք՝ սրանց շարքում չպետք է դասել դերանուն + փոխանուն թվական կապակցությամբ կառույցները (մենք երեքս, դուք երկուսդ, մենք

առաջիններս), քանի որ այս դեպքում հարկ կլինի նախ՝ ընդլայնել այդ կապակցությունների շարքը՝ դերանուն + փոխանուն ածական (մենք վերջիններս, դուք ընտրյալներդ, մենք մեծերս), դերանուն + փոխանուն հարակատար դերբայ (դուք կոչվածներդ, դու հալածվածդ), դերանուն + փոխանուն մակբայ և այլն: Ապա՝ դերանուն-թվական կապակցություններում թվական բաղադրիչի՝ լրացում ստանալու դեպքում (մի բան, որը հնարավոր չէ դերանուն-դերանուն կապակցություններում) բութով տրոհումը դառնում է կանոնական (ինչպես բացահայտիչ-բացահայտյալ կապակցություններում է), օրինակ՝ «Մենք՝ ցուցակում վերջին երկուսս, տեղյակ չենք եղել», կամ՝ «Դուք՝ ի վերուստ կոչվածներդ, անտրտունջ կրում եք ձեր խաչը»: Հետևաբար շարահյուսորեն առավել հիմնավորված կլինի չտրոհվող կապակցություններ համարել միայն դերանուն + դերանուն կապակցությամբ կառույցները. մյուսները դիտարկել որպես բացահայտիչ-բացահայտյալ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոյական անդամի լրացումները իրենց կարևոր և առանձնահատուկ տեղն ունեն նախադասության երկրորդական անդամների շարքում: Պետք է իրականացնել համակարգված ուսուցում որոշչի, հատկացուցչի, բացահայտչի կետադրությունը, շարադասությունը ուսուցանելու համար: Գոյականական անդամի լրացումների յուրացումը կօգնի ճիշտ ներկայացնել ասելիքը, հարստացնել բառապաշարը, խուսափել տարածված սխալներից: Քերականական այս նյութի ուսուցումը հետապնդում է կարևորագույն նպատակ.

1. սովորողների բանավոր և գրավոր խոսքի զարգացումը, որը իրականանում է սովոողների գործուն մասնակցության ապահովման ճանապարհով
2. ապահովում է նրանց ճանաչողական, հաղորդակցական, համագործակցային, ստեղծագործական կարողությունների ձևավորումը, զարգացումը և ամրապնդումը
3. Արդյունավետ ուսուցման երաշխիքներից մեկն էլ յուրաքանչյուր դասին համապատասխան նյութի յուրացումը բոլոր աշակերտների համար ապահովելն է։

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա.Աբրահամյան,ժամանակակից հայերենի քերականություն,Երևան,1975
2. Աբրահամյան Ս., Հայերենի կետադրություն, Եր., 2002:
3. Բարսեղյան Հ., Մեյթիխանյան Փ., Հայոց լեզու. դասագիրք միջին դպրոցի 9-րդ դասարանի համար, Եր., 2013:
4. Գարեգինյան Գ., Ժամանակակից հայոց լեզու. բարդ նախադասություն, Եր., 1984:
5. Գարեգինյան Գ., Հայերենի կետադրության մի քանի վիճելի դեպքերի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 1990, թիվ 2:
6. Գյուլբուդաղյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Եր.,1984:
7. Դավթյան Յու., Հայերենի կետադրության ինքնուսույց, Եր., 1995:
8. Դարբինյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. կետադրություն, Եր., 1990:
9. Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու. դասագիրք ավագ դպրոցի հումանիտար հոսքի 11-րդ դասարանի համար, Եր., 2010:
10. Եզեկյան Լ., Սարգսյան Ա., Սաքապետոյան Ռ., Հայոց լեզու, 12-րդ դասարանի համար, Եր., 2011:
11. Զաքարյան Հ., Կետադրական բառարան (երկրորդ՝ լրամշակված հրատարակություն), Եր., 2013:
12. Թորոսյան Ա., Հայերենի կետադրությունը (ուսումնաօժանդակ ձեռնարկ), Եր., 2004:
https://grigorstepanyan.wordpress.com/2021/12/16/%D5%B0%D5%A1%D5%BF%D5%AF%D5%A1%D6%81%D5%B8%D6%82%D6%81%D5%AB%D5%B9/

https://hy.wikisource.org/wiki/%D4%B7%D5%BB:%D5%87%D5%A1%D6%80%D5%A1%D5%B0%D5%B5%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6,_%D5%95%D5%AA%D5%A1%D5%B6%D5%A4%D5%A1%D5%AF_%D5%B1%D5%A5%D5%BC%D5%B6%D5%A1%D6%80%D5%AF_%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D6%81%D5%B9%D5%AB_%D5%B0%D5%A1%D5%B4%D5%A1%D6%80_(Syntax,_additional_manual_for_teachers).djvu/74

http://lib.ysu.am/disciplines_bk/d957b17fa5b273148b4148bd4faa9c70.pdf